ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-278[2]-27.05.2022-ՏՀ-011

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 137-Ն օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) Գյուղատնտեսական կենդանիների կարանտինի սահմանման և չեղյալ հայտարարման կարգը.».

2) 2-րդ մասի 3-րդ կետից հանել «ու լայն տարածում ունեցող ոչ վարակիչ» բառերը.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով.

«3.1) Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների ծրագիրը.».

4) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ, 8-րդ, 9-րդ կետերով.

«7) կենդանիների վարակիչ հիվանդությունների մասին ծանուցման և գրանցման կարգը.

«8) Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը.

9) Անասնաբույժի որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման կարգը:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված կարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում: